

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ

«ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ»

ԵՒ

«ՆՈՐՈԳՈՂ ՏԻԵԶԵՐԱՅ» ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1973, ք. 3-4, էջ 438-479)

Բ.

ՆՈՐՈԳՈՂ ՏԻԵԶԵՐԱՅ

Ինչպէս «Այսօր անմառ» չարականի ուսումնասիրութեան ընթացքին, հոս ալ կը փափաքինք՝ հանդիպակաց սիւնակներու վրայ նախ ներկայացնել «Նորոգող տիեզերաց»-ի եւ «Յիսուս Որդի» քերթուածի համանման տողերը, չարունակելու համար մեր խորհրդածութիւնները՝ վերլուծելով «Նորոգող տիեզերաց»-ի բանաստեղծական նկարագիրը, աստուածաբանական բովանդակութիւնը, ձեւական վերամշակումի աշխատանքը, անձնականութեան եւ նորութեան կնիքը, տաղաչափական արուեստը, լեզուն եւ գերազանց արժէքը:

1. Նորոգող տիեզերաց
Որ զգեցուցեր մեզ լոյս փառաց,
Արկար ըզքեւ ի զինուորաց
Քղամիթ կարմիր նախատանաց.
Մերկեա յինէն ըզփութ մեղաց
Ըզտրտագինն արեամբ ներկած.
Եւ ըզգեցո գուրախալին
Ըզպատուհանն իմ զառաջին:

2. Երկնաւոր թաղաւորիդ
Ի ծուներ իջեալ խաղ առնէին,

Որ ըզգեցար ըզծիրանին
Արկեր քղամիթ կարմիր յանձին,
Նախատանաց զոր կարծէին
Չինուորք Պոնտոս Պիղատոսին.
Ըզփութ մեղաց մերկեա յինէն,
Չյորդան կարմիր արեան գունին,
Եւ ըզգեցո գուրախալին,
Որ զգեցուցեր զմարդն առաջին:
(Յիսուս Որդի, Գ. էջ 129)

Ի ծուներ իջեալ կատակէին,
Խաղ առնելով ծիծաղէին,

Ծածկեալ ըզգլուխըդ կոփէին
Եւ եղեգամբ հարկանէին.
Եւ զիմ անկեալ մինչ ի գետին
Ի հնազանդել կամաց չարին,
Մի՛ քողուցուս խաղալ սովին
Այլ կանգնեցես զիս վերստին:

Յոր հայեցեալ զօրքն երկնային,
Ահա երկիր պազանէին,
Չի ըզբնութեանս աղամային
Բարձցես դամոթ մեղսասիրին.
Եւ զիմ հոգւոյս մըտաց խղճին
Լուծցես զամօթըն տրտագին:
Որ ըզգլուխ քո զերկնային,
Յորմէ սարսեալ սերովբէին,
Ծածկեալ ձորձովըն կոփէին
Եւ եղեգամբ հարկանէին,
Վասն զըլխոյ հողեղինին
Խոնարհելոյ կընծն ոտին,
Չի վեհագոյն երկնից դասին
Ըզնա դիցես ի քոյդ մարմին.
Եւ զիմ անկեալ մինչ ի գետին
Եւ խոնարհեալ ոտից չարին
Վասն զործոց անօրինին.
Որ զիս յերկիր կործանեցին,
Մի՛ քողուցուս խաղալ մովին,
Որպէս մանկանց գնդակ խաղին,
Այլ փրկեցես ի թշնամոյն,
Յօդել ի գլուխ քո վերստին:
(Յիսուս Որդի, Գ. էջ 129-130)

3. Բամեալ բոլորըդ քո մարմին
Յետ վընըռոյ դատաւորին
Սաստիկ էառ զհարուած գանին
Վասն զանից նախաստեղծին.
Ձիս որ յոտից մինչեւ ցըզուլիս
Յաւօք մեղիմ անհրմարին,
Առողջացո դարձեալ կրկին,
Որպէս շնորհօք յաւագանին:

4. Սրբափայլ պճնեալ զարդուն
Ձոր զգեցուցեր Ահարովին,
Փոխան պըսակ ի փշոց եղին
Մըշակք այգւոյն իսրայելին.
Ըզփութ մեղաց հանցես յինէն,
Ձոր յիս եհար իմ քշմամին,
Եւ ողջացո զխայթուած վիրին
Ձի սպիւք մեղացըն ջնջեսցին:

5. Ետուն ըմպել քեզ ըզլեղին
Եւ ըզփացալիս ի ծարալին.
Արբեր կամաւ զի քաղցրասցին
Ճաշակքն պտղոյն դառնագունին.
Ըզդառնութիւն քունաւորին
Ձոր ի մասունս հոգւոյս արկին,
Հնքեա ի բաց հանդերձ սովին
Եւ քաղցրասցի սէր քո ի սմին:

Որ ի բոլոր քոյին մարմին
Եւ բովանդակ մասն անդամին
Առեր սաստիկ զհարուած գանին
Յետ վընըռոյ դատաւորին,
Ձիս որ յոտից մինչեւ ցըզուլիս
Յաւօք մեղիմ անհրմարին,
Առողջացո դարձեալ կրկին,
Որպէս շնորհօք աւագանին:

Որ փոխանակ մեղաց փըշին,
Ձոր մեզ անէժըն բուսուցին,
Պըսակ ի փշոց ի գլուխ եղին
Մըշակք այգւոյն իսրայելին.
Խլեա ըզփութ մեղաց յինէն,
Ձոր յիս եհար իմ քշմամին,
Եւ ողջացո զխայթուած վիրին,
Ձի սպիւք մեղացըն ջնջեսցին:

Որ ընդ պտղոյն քաղցրագունին
Դառնախայրի մահացուցին,
Ճաշակեցեր զխոնակ լեղին
Եւ ըզփացալիս ի ծարալին.
Ըզդառնութիւն քունաւորին,
Ձոր ի մասունս հոգւոյս արկին,
Մաքրեա ի բաց հանդերձ մովին,
Եւ քաղցրասցի սէր քո ի սմին:

6. Ստեղծեալ ծառոյ մահաբերին,
Այնձ որ բուսաւ ի մէջ դրախտին,
Փոխան բարձր եզփայտ խաչին
Ի Գողգոթայ համեր տեղին.
Ձիւ առ ի մեղս անկեալ հոգի
Եւ ծանրագոյն բարձող բեռին,
Բարձ ի յուսոյդ ըստ ոչխարին,
Հան ի յերկինս յուխտեալ տեղին:

7. Ի յուրբաքու ժամ երրորդին
Բեւեռեցար Տէր ի խաչին.
Լուծեր զկապանս նախաստեղծին
Եւ կապեցեր ըզթշնամին.
Ձիւ ամրացո ընդ հովանեաւ
Կենդանարար քո մըշմին,
Եւ ի ծագել յարեւելից
Լուսաւորեալ լուսով մորին:

Որ փոխանակ մահաբերին
Ծառոյն բուսեալ ի մէջ դրախտին,
Բարձր յուսոյ ըզփայտ խաչին,
Ի Գողգոթայ համեր տեղին.
Ձիւ առ ի մեղս անկեալ հոգի
Եւ ծանրագոյն բարձող բեռին
Թեթեւացո զաղցըր լըծով
Եւ փոքրողի բեռամբ խաչին:

Որ յուրբաքու ժամ երրորդին,
Թոր պատրանաց նախաստեղծին,
Բեւեռեցար, Տէր, ի փայտին
Ընդ անօրէն աւազակին.
Ձեռք որ զերկիր հաստատեցին՝
Տարածեցեր զայն ի խաչին
Փոխան նոցա ձգման ձեռին,
Որ ի ծառոյն մահ կըթեցին.
Ձիւ որ յանցեալ նրման նոցին
Եւ առաւել քան ըզնոսին,
Ձեռամբ տնկեալ տունդ Գոմորին
Պըտուղ կթեալ սողոմային,
Մի տուժեցես չափով չարին,
Մի պահանջեր զհամար պարտին
Այլ լեր քաւիչ իմոյ յանցին:
Որպէս նոցա յանյոյս վայրին:
Որ բարձրացար ի սուրբ խաչին,
Բարձր զյանցանքս մարդկային,
Եւ ըզքնութեանքս թշնամին
Բեւեռեցեր դու ի նրմին.
Ձիւ ամրացո ընդ հովանեաւ
Ամենայադք քո մըշմին,
Եւ ի ծագել յարեւելից՝
Լուսաւորեալ լուսով մորին:

(Յիսուս Որդի, Գ, էջ 131-132)

Ք

8. Էրանեալ աւազակին
Բացեր ըզդուռն Ադին դրախտին.
Ըստ հաւատոյ սրտի նորին
Կատարեցեր ըզխնդրելին.
Տուր եւ ինձ Տէր ընդ նրմին
Լսել ըզնոյն պատասխանին,
Այսօր ընդ իս իցես յԱդին
Ի հայրենիս քո առաջին:

9. Բարբառելով գէլի էլին
Հիմունք երկրի տատանէին,
Եւ վարագոյր հին օրինին
Վերուստ ի վայր պատանէին.
Արդ ընդ վիմացն որ շարժէին՝

Որ աջակողմն աւազակին
Բացեր ըզդուռն Ադին դրախտին,
Թիչեա եւ զիս յորժամ դայցես
Արքայութեամբ քո հայրենին.
Լըւայց եւ ես ըզցնծալին
Ձքն ասացեալ պատասխանին,
Այսօր ընդ իս իցես յԱդին
Ի հայրենիս քո առաջին:

Որ յահագին գոյժամբ ձայնին
Բարբառելոյ գէլի էլին՝
Հիմունք երկրի տատանէին,
Լերկեք բարձունք սասանէին.
Եւ վարագոյր հին օրինին՝

Շարժեալ գանշարժ սիրտս ի բարին.
Ընդ պատանել վարագուրին՝
Ձիւ պատանեալ ըզգէր պարտին:

10. Արեգակամ լոյս ֆող արկեալ
Խաւարամայր միջօրէին,
Եւ գերեզմանք բանային,
Մարմինք սրբոցն յառնէին.
Ընդ խաւարել լուսաւորացն
Մաքրեալ յիմէն զգործ խաւարին,
Ընդ մեռելոցն որք յառնէին
Կանգնեալ գմեղօք մեռեալ հոգիս:

Վերուստ ի վայր պատանէին,

Եւ գերեզմանք բանային,
Մարմինք սրբոցն յառնէին,
Արեգակամ լոյս ֆողարկեալ
Խաւարամայր միջօրէին,
Նա եւ լուսինն, օրինակին
Փոփոխելով յարեան գունին.
Գանգի ըզտէրդ իւրեանց տեսին
Մերկ ի խաչին, չհանդուրժէին.
Որ փոխանակ բանականին
Անբան տարերջն սաքաչին,
Արդ ընդ վիմացն որ շարժէին,
Շարժեալ գանշարժ սիրտս ի բարին,
Ընդ մեռելոցն որ կանգնէին,
Կանգնեալ գմեղօք մեռեալ հոգիս.
Ընդ պատանել վարագուրին
Վասն պարտեացն աղամային՝
Ձիւ պատանեալ գնուրիւն չարին
Ձնեալ ըզգէր մեղացս անձին.
Ընդ խաւարել լուսաւորին՝
Հերքեալ յիմէն գգունդ խաւարին.
Ընդ լուսանալ յիննբորդին՝
Լուսաւորեալ զիս վերստին.
Ընդ մերկանալ քո ի վայրտին՝
Ընդ մերկութեան նախաստեղծին,
Ձիւ ծածկեցես փառօք քոյին
Յաւուր մեծի հրապարակին:

(Յիսուս Որդի, Գ, էջ 133-134)

11. Նոր սիրոյ պատուիրանին
Գործով լըցող եղբր բանին,
Ազօքելով առ Հայր յերկինս
Թողուլ ըզմեղս որ ի խաչին.
Ինձ որ հոգւով հաւատացեալ
Երկրպագեմ քեզ Միածին՝
Թող ըզլուծուժն հրամանին
Մի յիշեսցին մեզքն առաջին:

Որ փոխանակ խաչահանուաց
Տանըն լեւալ Հրէից ազգին
Ազօքելով առ Հայր յերկինս,
Թողուլ զմեղսն որ գործէին.
Ինձ որ հոգւով հաւատացեալ
Երկրպագեմ քեզ Միածին,
Թող զիս զյանցանքս որ գործեցի,
Մի յիշեսցին մեզքն առաջին:

(Յիսուս Որդի, Գ, էջ 134)

12. Սարսեցին սանդարմանք
Ի յաւանդելն առ Հայր զհոգիդ,
Որ ի դըժոխս իջեր ներքին,
Ի բանտ մահու եւ խաւարին,
Կապեալ զիշխանն մահածին
Հաներ զհոգիսն որ ի բանտին,

Եւ զիս հանցես Տէր ընդ նոսին
Բանտէ մեղաց աղջամղին:
(Վերջին երեք տունները բոլորովին
նոր ձեւում են, հեռաւոր ներ-
շնչումով Յիսուս Որդիի, Գ. էջ
135-137):

13. Աղբերացն անապական
Որ յետ մահուն անմահարար,
Բղխեալ ի քէն վրտակ կրկին
Ի նորոգումն կողածին,
Բաց ըղբերան իմ յարբուցումն
Քո արեան կենարարին.
Լըւա դարձեալ յաւազանին
Թէ ոչ շնորհօք այլ արտասուօք:

14. Յանմահիդ մեռանելոյ
Ձմեռեալ հոգիս կենդանացո,
Թաղմամբ ի նոր գերեզմանի
Ձթաղեալս ի մեղըս վերածեա,
Ի գրի ներքնումն իջանելով
Ի գրոյն մեղաց վերաբերեա,
Ի ստուեր մահու քո բնակելով՝
Լուսաւորեա եւ զիս հոգւով:

15. Սիրտ իմ առ քեզ աղաղակէ,
Բանդ որ ընդ Հօր ի սկըզբանէ,
Որ կամաւոր վասըն մարդկան
Կրեցեր մարմնով դայս ամենայն.
Ինձ լսելի արա ըզձայն
Յարբայութեանդ քո կոչման,
Ընդ ժողովոցն անդ անդրանկաց
Օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան:

Նորագոյ տիեզերացը նկարագրականին տեղ, որ կը բնորոշէ Այսօր
անմառը, կը խորացնէ մտածութիւնը եւ զգացումը՝ խորհրդածու-
թիւններու հիւստածքով: Քրիստոսականեղբրոն հոգեւորականութեան
չարժուած շնչառող եւ ընդհանրացնող նպատակ մը՝ կարծէք՝ կը հե-
տապնդուի հոս: Առանց բոլորովին լքելու նկարագրական տարրը,
բանաստեղծը կը կեդրոնանայ խորհրդաբանական մտածութիւնները
եւ զգացումի ու յուզական շնչառը սաստկացնելու: Ալիշան՝ զգացումի
գործ է ըսել կ'ուզէ, երբ կ'ըսէ թէ «հեղինակն իր մաքուր, փափուկ
եւ աստուածարեալ սիրտն այնպէս հալեցուցեր է, որ ամէն մտադիր
կրկնողաց սրտին հետ ալ խառնուելով՝ վերադառնայ առ աղբիւրն
սիրոյ եւ սուրբ ցաւոց»¹⁵:

15. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, էջ 447:

Աստուածաբանական խորհրդաբանական ակնարկները կամ միս-
տիք յարմարցումները տիրական ընթացք առած են հոս. ամէն տուն
ունի իր հոգեկան անդրադարձումը՝ որ կը յաջորդէ նկարագրակա-
նին: Ու այս յարմարցումները, այնքան հարազատ՝ ժամանակին
քրիստոսաբանական տուեալներուն, որ կը բացատրուին անտարա-
կոյս արեւմտեան ժամանակակից խորհրդաբան աստուածաբաններու
համանման արտայայտութիւններու համեմատութեամբ, ինչպէս նա-
խապէս ըսուեցաւ:

Նորագոյ վերստին կը վերապրի ձաղանքի եւ ձաղկանքի տե-
սարանները, որոնց ինչ ինչ տողեր միայն կը զուգընթանան երկու
քերթուածներուն մէջ, թեթեւ տարբերութիւններով. ինչպէս՝

Ի ծունր իջեալ կատակէին
զգլուխն եղեգամբ հարկանէին

(Այսօր անմառ, 28, որ կախում ունի Բան հաւատոյէն).

նման ձեւով Նորագոյի մէջ, որ կապ ունի Յիսուս Որդիին հետ.

Ի ծունր իջեալ խաղ առնէին,
ծածկեալ ըզգլուխդ կուփէին
եւ եղեգամբ հարկանէին (Նորագոյ, 2).

նմանապէս՝

պըսակ ի փշոց բոլորէին
ըզփուշ մեղացըն բարձողին (Այսօր անմառ, 28).
փոխան պըսակ ի փշոց եղին (Նորագոյ, 5).

մնացած տողերուն վրայ կը տիրէ այլազանութիւն մը արտայայտու-
թեան եղանակին, որով երկու քերթուածները՝ իրենց գաղափարա-
յին խորքով՝ չեն նոյնանար իրարու հետ: Ձանազանութիւնը գլխա-
ւորապէս կը կայանայ վերջին միստիք նոր գիւտերուն մէջ, միեւնոյն
տեսարաններու պատկերը գծած ատեն անգամ, եւ ճիգ մը աւելի՝
տեսարաններու պատկերը գծած նկարագրութիւն: Ձաղանքի տեսա-
դնելու խորհրդածութիւնը քան նկարագրութիւնը: Ձաղանքի տեսա-
դնելն մինչեւ խաչելութիւնը կը կազմէ հեղինակին ծրագիրը նիւթի
րանէն մինչեւ խաչելութիւնը կը կազմէ հեղինակին ծրագիրը նիւթի
ընդլայնման, որուն կը կցէ հուսկ իբր վերջաբան՝ երեք զգացուած
տուններ, բխած իր հաւատքի եւ սիրոյ հնոցէն:

1. Գրական հայեացքով մերձեցում մը Նորագոյի բանաստեղծա-
կան նկարագրին շուրջ՝ չի բանար մեր առջեւ նորութիւններ. յղա-
ցումը եւ արտայայտութեան եղանակը համընթաց է նախընթաց քեր-
ցումը եւ արտայայտութեան եղանակը համընթաց է նախընթաց քեր-
թուածին, որուն տեսակ մը շարունակութիւնն է, եւ կը բովանդակէ
թուածին, որուն տեսակ մը շարունակութիւնն է, եւ կը բովանդակէ
նոյն գրական պատկերներու եւ հակադրութիւններու տպաւորիչ ազ-

ստեղծել կը ջանայ ըլլալ կտրուկ, սեղմ, աշխոյժ: Ասկէ կը ծնանի նոր միութիւն մը, որ արտայայտչական պայմաններուն պատճառով՝ տուած է երկու քերթուածներուն գրական վերամշակումի մը նորութիւնը եւ ամբողջականութիւնը: Նոր միութեան մը հպատակելու ճիգը կը յայտնուի երկուքին մէջ ալ, Այսօր անմատչելի սկիզբի ութեակներուն, եւ Նորագոյն վերջաւորութեան: Եթէ նախկին բնագիրները տեղ տեղ իրենց երկարութեան ճապարակութեան զգացողութիւնը կու տան, հոս արագ եղանակը եւ նկարագրութեան տաքութիւնը, զգացումներուն հոգեկան հաղորդակցութիւնը՝ շատ աւելի խօսուն են եւ ուժգնորէն տպաւորիչ:

5. Տաղաչափական քեֆնիքը նոյն է նախընթացին հետ. միայն դիտելի կէտը այն է՝ որ յանգաւորումը աւելի միակերպութիւն ունի ԻՆ յանգով, բնականորէն հետեւելով իր սկզբնական աղբիւրին: Նախընթաց քերթուածը աւելի զանազանեալ էր այդ կողմէ: Ուրիշ դիտելի կէտ մը ութեակներուն մէջ՝ տողերու յանգաւորումներու անկանոնութիւնն է, քառեակէ քառեակ փոփոխութիւնը, որ նախընթացին մէջ աւելի տիրական դիժ մը կը յատկանշէր. հոս հեղինակը այդ մտահոգութիւնը չէ ունեցած, այլ թողած է կարծէք բախտին եւ երբեք յանգի համար չէ ուղած զոհել իմաստներու բնականութիւնը: Օրինակ «Երկնաւոր թագաւորիդ»ի դիմորոշ յօդը (քեզի, երկնաւոր թագաւորիդ իմաստով) պահած է, ուր դիւրաւ կրնար յանգի մը համար ընել քագաւորին, հրաժարելով կոչականի մը տուած նրբերանդէն: Նմանապէս «Սրբափայլ պճնեալ զարդուն»ը կարող էր ընել հանդերձին, կամ այլ ձեւով լուծել յանգային դժուարութիւնը, ինչպէս «Ընդ խաւարել լուսաւորացն»ը ընել լուսաւորին համաձայն Յիսուս Որդիի. սակայն այդ բոլոր մանրամասնութիւնները լքած է՝ չկապուելու համար յանգին: Այս անփութութիւնը կը նշմարուի Նորագոյն վերջին երեք ութեակներուն վրայ, ուր իմաստներու պարզութիւնը, անկեղծութիւնը եւ բնականութիւնը աւելի ալ զգալի է:

Յանգերու դժապատկերը հետեւեալն է.

Փ

Տուները				Տուները			
1.	6	-	2	9.		8	
2.	1	-	7	10.	1	3	- 1 2 1
3.		4	- 1 3	11.		4	- 1 3
4.	1	-	7	12.	0		- 6
5.			8	13.	0	2	- 0 0
6.			8	14.	2	0	- 0 2
7.		4	- 1 3	15.	2	2	- 2 0
8.			8				

հոս ամբողջական ութեակներ կան ԻՆ յանգով, բայց մեծամասնութիւնը չի հետեւի կանոնի մը կամ որոշ սկզբունքի, այլ լոկ ներշնչումի ազատութեան: Այս պարագան յատուկէն նշանակեցինք, որովհետեւ Այսօր անմատչելի եւ Նորագոյն տաղաչափական յօրինուածքին մէջ յատկանշական երեւոյթ մըն է ասիկա, եւ որ տեսակ մը ճիգ ցոյց կու տայ ձերբազատուելու կապանքներէ, կամ իմաստներու ազատութեան նախընտրութիւն մը՝ հակառակ խիստ օրէնքներու:

6. Լեզուի դարձուածաւոր արտայայտութիւններ՝ որով նախադասութեան կազմին մէջ տեղի կ'ունենան շարադրութեան տեղափոխութիւններ, այս քերթուածին մէջ ալ կը յայտնուին: Նկատի առնել, օրինակի համար, այս շարժումը, որ թէեւ չի ստեղծեր ոչ մէկ միութիւն, բայց քիչ մը կը դժուարացնէ թափանցումը իմաստին.

Սրբափայլ պճնեալ զարդուն՝
զոր զգեցուցեր Ահարոնին,
փոխան պըսակ ի փշոց եղին
մշակք այգւոյն Իսրայելին:

Բնական շարադրութիւնը պիտի պահանջէր «փոխան պճնեալ... զարդուն, զոր զգեցուցեր... պսակ ի փշոց...» եւն: Նմանապէս

Ստեղնեալ ծառոյ մահաբերին,
այնմ որ բուսաւ ի մէջ դրախտին,
փոխան բարձեր ըզփայտ խաչին,

այսինքն՝ «փոխան ստեղնեալ ծառոյ ի մէջ դրախտին՝ բարձեր ըզփայտ խաչին...»:

Շրջումի գեղեցիկ օրինակ մըն է.

Աղբերացն անապական,
որ յետ մահուն անմահանար,
բղխեալ ի քէն վրտակ կրկին
ի նորոգումն կողածնին,
բաց ըզբերան իմ...,

ուր կարելի է երկու տարբեր ձեւով հասկնալ միտքը. նախ՝ առնելով ենթական «բղխեալ» բային՝ վտակ կրկին (երկու վտակներ). ի՞նչ բանի, - աղբերացն՝ բխած քեզմէ, անմահացուցիչ մահէդ ետք, նորոգելու համար Եւան: Եթէ ենթական է վտակը, իր յատկացունքին է աղբերաց, իսկ անապականը պարզապէս մակդիրն է աղբի:

արժանիքներ չունենալ, բայց ունին գերազանց արժանիքը հայ հոգիին ամենէն անարատ բղխումները կազմելու»²⁰ :

Առարկայապէս ոչինչ ըսող այս տողերուն տակ ծածկուած կայ միակ պատճառը անոր տգիտականքին՝ նկատմամբ Շնորհալիի բանաստեղծութեան. չափին եւ յանգերուն տաղտուկը²¹ : Յայտնի է թէ Շնորհալի թուական կամ արարական կոչուած չափը՝ Մաքիստրոսէն ետք՝ առաւելապէս դործածողն է, փոխանակ նախկին չրջանի ամանակայինի, իրմէ ետքն ալ ժառանգութիւն թողլով յաջորդներուն : Յանգը ժամանակին ըմբռնումին մէջ կը գտնէ իր բացատրութիւնը, որ դադափարի եւ զգացական կէտերու քննութեան մը մէջ՝ նկատի առնուելիք իսկ չէ, եւ ոչ ալ Բաբուսի (Ժայռակերպ) ճարտարութիւնները : Ծանօթ բաներ են այս հարցերը, ուստի՝ անտեղի է այս պատճառով ստորագնահատել տաղանդ մը, այս տեսանկիւնէն դիտուած, մանաւանդ անտեսելով այն պարագան որ՝ յանգաւոր են նմանապէս եւ թուական չափերու մէջ առնուած նաեւ Այսօր անգառը, Հանգստեան կարգի տունները, Նայեաց սիրովը, Ճաշու շարականները, որոնց կը համակրի :

«Աստուածային» մակդիրով՝ ճանչցուած քերթուածը (Յիսուս Որդի) դուրս է ցանկէն, ինչպէս ողորմելի բան մըն է Օշականի համար Ողբ Եղեւսիոյ, ուր Շնորհալիի տկարութիւններն են որ կը տիրապետեն՝ մեծահամբաւ հատոր համարուած այս գործին մէջ²². Վկայութիւններ ասոնք՝ փաստելու համար թէ ինչքան հարեւանցի մերձեցում ունեցած է Շնորհալիի քերթողական գործերուն մեծատաղանդ քննադատը :

Անշուշտ հարկաւոր էր Շնորհալին պաշտպանել մեր օրերու «Հարթոյ»ին անգիտակցութիւններուն դէմ : Ատոր տեղը առ այժմ հոս չէ : Կը գոհանանք միայն յիշեցնելով որ իրմէ առաջ՝ Մանուկ Աբեղեան, որուն դրադատական արժանիքները շատ աւելի առարկայական են եւ աւելի խոր, «գեղեցիկ պոէմ» կ'որակէ դանոնք, մինչ ուրիշ մը, թերեւս ժողովրդական դատողութեամբ, բայց ճիշտ տեսութեամբ՝ կը համարի «հռչակաւոր եւ բաղմախորհուրդ. եթէ Շնորհալին ուրիշ երգահիւսութիւն մը չունենար, դարձեալ պիտի յաւերժանար այդ երգերով, որովհետեւ այնչափ վեհ են»²³ :

Եթէ մեզի անծանօթ ուրիշ վերլուծականներ ունեցած չէ (բացի Սիմոնի 1945 թուականի վերոյիշեալ էջերէն), հարկ է եղրակացնել թէ Օշական երբեք չէ մօտեցած միջին դարու այս սրբազան բանաստեղծի գործին իսկական քննութեան, գրական դատողութեամբ մը՝ որ համապատասխանէր իր անունին եւ համբաւին, տալով բովանդակալից վերլուծութիւն մը գէթ շարականներուն, որոնց մէջ կարգ մը չէր համաձայն կ'երթան իր ճաշակին : Ատոնց մէջ ալ, որոնցմէ մէկն է «Այսօր անգառ»ը, իր մերձեցումը այնքան հարեւանցի է՝ որ ընդհանուր բանաձեւումներէ եւ իրեն սովորական դարձած դարձըլուածաւոր արտայայտութիւններէ ետք՝ ոչինչ կը մնայ մեր ձեռքը, դրականօրէն ըսուած, դատուած եւ վերլուծուած :

ստեղծի գործին իսկական քննութեան, գրական դատողութեամբ մը՝ որ համապատասխանէր իր անունին եւ համբաւին, տալով բովանդակալից վերլուծութիւն մը գէթ շարականներուն, որոնց մէջ կարգ մը էջեր համաձայն կ'երթան իր ճաշակին : Ատոնց մէջ ալ, որոնցմէ մէկն է «Այսօր անգառ»ը, իր մերձեցումը այնքան հարեւանցի է՝ որ ընդհանուր բանաձեւումներէ եւ իրեն սովորական դարձած դարձըլուածաւոր արտայայտութիւններէ ետք՝ ոչինչ կը մնայ մեր ձեռքը, դրականօրէն ըսուած, դատուած եւ վերլուծուած :

(Շար. 2)

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ
(Թեո մահու հրատարակութիւն)

20. Անդ, էջ 152 :

21. Անդ, էջ 51 :

22. Անդ, էջ 52 :

23. Դ. ԽԱՉԿՈՆՅԱՆ, Հայոց կրօնական բանաստեղծութիւնը (տպագրւած՝ անյայտ) :